

ուի Սկիւտարի գերեզմանատունը, ինչպէս կը գրէ Դարանազ-
ցին. «Եւ Ջաքարէն յետ ամի միոջ ի բարձր տեղոջէ ի վայր
անկաւ հւ յետ քանի աւուրց յետոյ փոխեցաւ առ Աստուած.
որ թ՛վին ՌՁԹ» (= 1640): Այս է իր տապանագիրը.

«Այս է տապան: Դամբարանի

Ջաքկիաս վրդապի: Նորոգ

ող: Սբ Կրապ եկեղեցոյն

Նոր Մահչալի. վաղջան

եցաւ. Մերս

Թ՛վին. Ռ. Կ. Ջ. (= 1617).

(Հա. 1911. էջ 78):

Սարգիս դպիր Յովհաննէսեան՝ իր Կ. Պոլսոյ տղայրուքեան
ձեռագրին մէջ կը պատմէ թէ Ջաքարիայի տապանաքարը նո-
րոգել տուած է Ղափանցի Գէորգ վրդ.ը (1751ին ՊԿ.) որ՝ տա-
պանաքարին վրայ, փոխանակ ՌՁԹի (= 1640), նշանակել տը-
ւած է ՌԿՁ (= 1617), թուականը. ասիկա սակայն թուականն
է ա՛յն արծաթէ խաչին որ Ջաքարիայի կողմէն նուէր տրուած
է՝ Սկիւտարի Ս. Կարապետ եկեղեցիին շինութեան տարին: Ջա-
քարիա ՊԿ. կը կարծուի թէ տաղեր գրած է (Ընթոյ. 1905. էջ
399):

ՋԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ԵԴԵՍՍՅԻ.— Մբ. 1855ին կը միաբանա-
կցէր Ս. Յակոբի:

ՋԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ԵԴԻԱՅԵԱՆ, ՄԱԼԿԱՐԱՅԻ.— Մբ. Ծ. 1814.
աւագանի անունը Կարապետ. Ձո. 1857ին. եղբայրը՝ Յովհան-
նէս ճապի Երուսաղէմի կալուածներուն Պոլսի մէջ (1844—1855).
ՏԼ. (1868—70). քննիչ Քէօթահիայի (1871—72). երկար տա-
րիներ ժամօրհնող Ս. Կարապետ եկեղեցիին Սկիւտարի. կը
վախճանի 1893ին:

ՋԱՔԱՐԻԱ ՎՐԴ.— Մբ. 1794ին խոստ. Ս. Յակոբի մէջ:

ՋԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ՄՇՈՅ.— Առ. Մշոյ (1845—51) և Տիար-
պէքիւրի 1853ին. կը ձեռնադրուի եպս. 1869ին. ուխտաւորու-
թեամբ կ'այցելէ Ս. Յակոբի վանքը 1853ին. իր մասին տեսնել
(Դիւան, Մանր Մասկնազիրֆ, էջ 538):

ՋԱՔԱՐԻԱ ՎՐԴ. ՎԱՂԱՐՇԱՊԱՏԵՅԻ.— Ծ. Ջուղայի մէջ.
աշկ. Մովսէս կթղ.ին. Առ. Ամատունեաց Ս. Կարապետի վա-